

ՄԻԶՊՁՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ՖՐԻԴՐԻԽ ԷՔԵՐՏ ՀԻՄՆԱԳՐԱՄ



**ՄԱՐԴՈՒ  
ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015Թ.  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ 2016

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ  
ՖՐԻԴՐԻԽ ԷԲԵՐՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՐԴՈՒ ԱՌԱՆՁԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015Թ.  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ



ՀՏԴ 339.92  
ԳՄԴ 65.5

Ժողովածուի նախապատրաստումը և հրատարակումն իրականացրել է Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հետ համատեղ:  
The preparation and publication of the digest is implemented by the Armenian Association of International Law in cooperation with the Friedrich-Ebert-Stiftung

**Խմբագիր՝** Վ.Հովհաննիսյան – իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
**Editor** V. Hovhannisyanyan - Doctor of Law, Professor

Մարդու առանձին սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքները Հայաստանի Հանրապետության 2015թ. փոփոխություններով Սահմանադրության համատեքստում – Եր: «ԻՐԱՎՈՒՆՔ» 2016. Էջ 116.

The Guarantees of Protection of Some Social Rights of Individual in the Republic of Armenia in the Context of the Constitutional Reforms of 2015 – Yerevan, «LAW» 2016 116 pages.

Ժողովածույում ներկայացված հոդվածներում տեղ գտած վերլուծությունները և եզրահանգումները հանդիսանում են հեղինակների գիտահետազոտական գործունեության արդյունք, որոնք պարտադիր չէ, որ համընկնեն Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամի դիրքորոշման հետ:

The analysis and conclusions mentioned in the articles of the Digest are the result of the authors research that not necessarily reflect the views of the Friedrich Ebert Stiftung's position.

Սույն հրատարակության նպատակն է օգնել այն անձանց, ովքեր հետաքրքրվում են մարդու սոցիալական իրավունքների պաշտպանության տեսական և գործնական բնույթի հիմնախնդիրներով:

The aim of the given publication is to assist the individuals, who are interested with the theoretical and practical issues of protection of human's social rights.

ՀՏԴ 339.92  
ԳՄԴ 65.5

ISBN 978-9939-828-53-4

© ԻՐԱՎՈՒՆՔ, 2016

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**LIST OF CONTENT**

**ՆԱԽԱԲԱՆ**

**PREFACE** ..... 5

**Գագիկ Ղազինյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս**

2015թ. սահմանադրական բարեփոխումները և գիտության  
ու կրթության հիմնահարցերի հիմնադիր կարգավորման նոր  
հայեցակարգը

**Gagik Ghazinyan - Doctor of Law, Professor,  
Academician of NAS RA**

«Constitutional Reforms of 2015 and the New Concept of Fundamental Regulation  
of the Issues in the Field of Science and Education» ..... 6

**Արթուր Վաղարշյան**

Կրթության իրավունքի սահմանադրական  
և օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները

**Arthur Vagharshyan - Doctor of Law, Professor**

«Issues of Constitutional and Legislative Regulation in regard  
of the Right to Education» ..... 22

**Արևիկ Պետրոսյան**

Երեխաների իրավունքների պաշտպանության  
հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

**Arevik Petrosyan - PhD, Associate Professor**

«Issues of Protection of Children Rights in the Republic of Armenia» ..... 41

**Հարություն Խաչիկյան**

Պատժի ենթարկված անձի վերասոցիալա  
կանացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

**Harutyun Khachikyan - Doctor of Law, Professor**

«Issues of Re-Socialization of Punished Individual in the Republic of Armenia» ..... 60

**Գևորգ Պետրոսյան**

ՀՀ Սահմանադրության նոր զարգացումները  
և աշխատանքային օրենսդրության բարեփոխման հրամայականը

**Gevorg Petrosyan - PhD, Associate Professor**

«New Developments of the Constitution of the Republic of Armenia and  
the Imperatives of Reforming of the Labor Legislation» ..... 79

**Վլադիմիր Հովհաննիսյան**

Հաշմանդամների՝ որպես խոցելի խավի իրավունքների պաշտպանության  
վիճակը Հայաստանի Հանրապետությունում

**Vladimir Hovhannisyan - Doctor of Law, Professor**

«Status of Protection of Physically Impaired Persons in the Republic  
of Armenia as Vulnerable Group» .....

## Գագիկ Սերգեյի Ղազինյան

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավագիտության դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ վաստակավոր իրավաբան,  
ՀՀ իրավաբանների ընկերակցության նախագահ, Իրավաբանների միջազգային  
միության փոխնախագահ, քրեական դատավարության ոլորտի  
ճանաչված մասնագետ, 10 մենագրությունների,  
32 համահեղինակությամբ դասագրքերի,  
10 ուսումնական ձեռնարկների և 58 գիտական հոդվածների հեղինակ:*

### 2015 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

#### «Գիտություն» գիտական հասկացությունը և դրա նշանակությունը սահմանադրական կարգավորման ընկալման համար

Նորագույն շրջանի երկրային քաղաքակրթության հասարակական հիմնարար երևույթներից են կրթությունը և գիտությունը: Հասարակական երևույթներ, որոնք անգնահատելի դերակատարություն ունեն հասարակության զարգացման գործում: Ընդ որում, դրանք սերտ փոխկապված են ու փոխապայմանավորված: Սակայն արդի հասարակական իրողությունների պայմաններում առկա է փոխկապվածություն, մի կողմից, սահմանադրության, և մյուս կողմից՝ կրթության ու գիտության միջև: Առաջին հերթին ակնհայտ է, որ սահմանադրությունը և դրա իրավական հայեցակարգը գիտական նվաճումների արդյունք են, իսկ սահմանադրության դրույթներն ունեն իրավագիտական հիմքեր, դրանց բնորոշ է գիտականությունը:

Հասարակությունը, պետությունը և նրանց հիմնական օրենքը կրում են կրթության ու գիտության պտղաբեր և արդյունավետ ազդեցությունը: Այդուհանդերձ, հասարակությունը, պետությունը, ինչպես նաև սահմանադրությունն էական ազդեցություն են թողնում կրթության ու գիտության և դրանց զարգացման վրա: Կրթության ու գիտության՝ որպես հասարակական առաջադիմության հիմնական գործոնների զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է կրթության ու գիտության հիմնահարցերի պատշաճ սահմանադրական ամրագրում, դրա վրա խարսխված օրենսդրական արդյունավետ կարգավորում: Այս երկկողմ կապը հասկանալու համար մեր առջև կոնկրետ որոշակի հարցադրումներ և կփորձենք տալ դրանց պատասխանները:

**Ի՞նչ է գիտությունը:** Այս հարցադրման պատասխանը գիտաբանական դիրքերից հետազոտելը սահմանադրական կարգավորման նոր հայեցակարգի իմաստավորման, դրա ձեռքբերումների արժեքավորման, թերությունների և բացթողումների վերհանման կարևոր միջոցն է և բանալին: Կարելի էր սկսել «ի՞նչ է սահմանադրությունը» հարցադրումից, սակայն իրավագիտության ոլորտում այդ հարցի պատասխանը գրեթե

հանրահայտ է, ինչը չենք կարող պնդել «ինչ է գիտությունը» հարցադրման մասին: Երևի թե ֆիզիկայի ոլորտում «ի՞նչ է սահմանադրությունը» հարցը տարակուսանք առաջացնող հարցադրում է: Նման արդյունք կարելի է արձանագրել նաև իրավագիտության ոլորտում «ի՞նչ է գիտությունը» հարցադրումն անելուց: Այս հարցադրումն ունի շատ կարևոր նշանակություն և դրա պատասխանը պետք է լինի ստույգ գիտական, գիտաբանության ճշգրիտ մոտեցումների վրա խրատված:

«Ի՞նչ է գիտությունը» հարցադրումը գիտաբանության կամ գիտության մասին ուսմունքում չունի միանշանակ պատասխան: Կան տարակարծիք մոտեցումներ, որոնք, իհարկե, հայեցակարգային սուր հակասություններ չունեն: Մոտեցումների տարբերությունը հանգում է «գիտություն» հասկացության բազմիմաստությանը կամ դրան մի քանի առումներ վերագրելուն:

Գիտաբանական մոտեցումներից մեկը տարբերում է գիտության հասկացության երեք առումներ՝ գիտությունը որպես ճանաչողական գործողություն<sup>1</sup>, գիտությունը որպես սոցիալական ինստիտուտ, գիտությունը որպես մշակույթի հատուկ ոլորտ<sup>2</sup>:

Մեկ այլ գիտաբան հիմնավորում է, որ գոյություն ունեն գիտության երեք հայեցակարգեր՝ գիտությունը որպես գիտելիք, գիտությունը որպես գործունեություն, գիտությունը որպես սոցիալական ինստիտուտ: Գիտությունն այդ երեքի օրգանական միասնությունն է, որտեղ գործունեությունը համակարգի հիմքն է, գիտելիքը՝ համակարգակապող գործոնը, իսկ սոցիալական ինստիտուտը գիտնականներին ու կազմակերպություններին իրենց համատեղ գործունեության մեջ միավորող եղանակը<sup>3</sup>:

Գիտաբանության մոտեցումները «ի՞նչ է գիտությունը» հարցին՝ չեն սահմանափակվում այս երկու տեսակետներով: Կան նաև այլ տեսակետներ, որոնց չենք անդրադառնա, քանի որ մեր խնդիրը «գիտություն» հասկացության բոլոր առումների ճշգրտման հարցը չէ: Ի վերջո, դա իրավագիտության խնդիրը չէ: Հետևաբար, կփորձենք այն եզրափակել մի այնպիսի տեսակետով, որն առանձնացնում է գիտության հասկացության ավելի շատ առումներ: Մասնավորապես՝

- 1) գիտությունը ճանաչողության հատուկ ոլորտ է և ստեղծում է գիտելիքի հատուկ տեսակ: Գիտությունը համարվում է մարդկային գիտակցության հատուկ ձև, այսինքն՝ գիտությունը գիտելիք, ճանաչողություն և գիտակցություն է,
- 2) գիտությունը ծագել է պատմության որոշակի փուլում և կրել ու կրում է բարդ պատմական փոփոխություններ, այսինքն՝ գիտությունը պատմական երևույթ է,
- 3) գիտությունը մարդկային աշխատանքի, ինչպես նաև հոգևոր արտադրության հատուկ տեսակ է, որն ունի առանձնահատուկ կազմակերպական ձևեր,

<sup>1</sup> **Գիտությունը՝ որպես ճանաչողական գործունեություն**, ուղղված է հատուկ արդյունքի՝ գիտական իմացության ստացմանը: Գիտությունն աշխարհի և մարդու, նրա ծագման ու զարգացման մասին գիտելիքների համակարգ է, որը ձեռք է բերվել որոշակի մեթոդների ուղղությամբ, բնութագրվում է օբյեկտիվությամբ, համակարգվածությամբ, ճշգրտությամբ, զարգացման ընդունակությամբ: Մինչև գիտության ձևավորումը շրջակա աշխարհը մարդը մեկնաբանում էր առասպելակրոնական ու առօրեական ձևերով (տես Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ, Եր., 2010, էջ 7):

<sup>2</sup> **Գիտությունը սոցիալական ինստիտուտ** է, որն ազդում է հասարակության բոլոր ոլորտների վրա և ունի բավականին բարդ ու բազմակողմանի կապեր իշխանության և գաղափարախոսության հետ: **Գիտությունը որպես մշակույթի հատուկ ոլորտ** իրենից ներկայացնում է այնպիսի համակարգ, որն արդի աշխարհում միավորում է բնական գիտության ճշգրտությունն ու արդյունավետությունը՝ ազատության ու անհատականության մարդասիրական իդեալների հետ (տես u Прижиленский В.И., Философия юридической науки, М., 2016, էջ 11):

<sup>3</sup> Տե՛ս u Шкляр М.Ф., Основы научных исследований. М., 2014, էջ 18:

4) գիտահետազոտական ոլորտը կոլեկտիվ և միաժամանակ անհատական գործունեության ոլորտ է, այսինքն՝ գիտության մեջ գոյություն ունի կոլեկտիվայինի և անհատական-անձնականի միասնություն<sup>4</sup>:

Այսպիսով, ամփոփելով գիտաբանության մեջ ընդունված մոտեցումները գիտության հասկացության առումների շուրջ՝ կարող ենք նշել, որ գիտությունը դիտարկվում է որպես գիտելիք, գործունեություն, աշխատանք, սոցիալական ինստիտուտ, մշակույթի հատուկ ոլորտ, գիտակցություն:

Գիտության ըմբռնման այս առումները կարևոր են, քանի որ գիտության հիմնահարցերի սահմանադրական կարգավորման հիմնադրույթների հիմքում ընկած են գիտության որպես՝ երևույթի հասկացության տարբեր առումներ: Հետևաբար՝ գիտաբանության մեջ վերհանված այդ առումները պետք է օգտագործվեն սահմանադրական նոր հայեցակարգի և դրա հիմնադրույթների ճշգրիտ մեկնաբանման համար:

**Ինչ ու է կարևոր գիտությունը:** Այս հարցադրման պատասխանը տվել է պատմությունը: Գիտությունը, դրա զարգացումը, ՊՏՀ-ն արդի հասարակության շատ ոլորտներում ու բնագավառներում կատարում են կանոն դեր: Գիտության զարգացման մակարդակը կարող է ծառայել հասարակության, տնտեսական, մշակութային, քաղաքակրթական, արդիական զարգացման ցուցանիշ<sup>5</sup>: Ֆ. Բեկոնն իր ժամանակին ասում էր, որ «գիտությունն ուժ է»: Այդ ուժի միջոցով հասարակությունը և պետությունը կարող են արդյունավետորեն լուծել իրենց առջև կանգնած խնդիրները: Գիտության դերը հասարակական կյանքում արտահայտվում է նրա գործառույթներում<sup>6</sup>, որոնցից կարելի է նշել՝ ա) ճանաչողական, բ) աշխարհայացքային, գ) արտադրական, տեխնիկատեխնոլոգիական, դ) մշակութային, կրթական<sup>7</sup>:

Գիտության կարևոր գործառույթները, դրանով պայմանավորված՝ գիտության դերը հասարակական կյանքում պահանջում են, որ պետության գլխավոր խնդիրներից մեկը դառնա գիտատեխնիկական առաջադիմությունը (ԳՏԱ): Վերջինս արդի դարաշրջանում հասարակական զարգացման հզոր գործոն է: Այսպիսով, պետության ներքին հիմնական գործառույթների համակարգում (տնտեսական, սոցիալական, ֆինանսական վերահսկողության, բնապահպանական, իրավական և այլն) առաջ է գալիս նոր գործառույթ՝ գիտատեխնիկական առաջադիմության ապահովման: Ընդ որում, պետության բոլոր ներքին գործառույթներն՝ իրենց խնդիրներով և բովանդակությամբ, արդեն շատ վաղուց ունեն սահմանադրական ամրագրում, այնինչ գիտատեխնիկական առաջադիմության ապահովման գործառույթի սահմանադրական կարգավորումը հանդիպում է եզակի: Այսպես՝ ՀՀ 1995թ. Սահմանադրության մեջ «գիտություն» եզրույթն ընդհանրապես չկար, իսկ գիտական բառն օգտագործված էր լոկ մարդու գիտական գործունեության ազատությունն ամրագրելիս:

Գիտատեխնիկական առաջադիմության կարևորագույն հասարակական դերը և գործառույթներն անհրաժեշտաբար պահանջում էին այն սահմանադրական ինստիտուտի վերածումը, ինչը և տեղի ունեցավ 2015թ. բարեփոխված Սահմանադրությամբ:

<sup>4</sup> Տե՛ս Ծ Օбщественное сознание и его формы, М., 1986, էջ 282-284:

<sup>5</sup> Տե՛ս Ծ Шкляр М.Ф., Основы научных исследований. М., 2014, էջ 22:

<sup>6</sup> Գիտության գործառույթները մարդու և հասարակության հրատապ պահանջումների բավարարմանն ուղղված գործունեության հիմնական ուղղություններն են, որոնց շնորհիվ գիտությունը դառնում է պետական և մեծ նշանակություն ունեցող (տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ, Եր., 2010, էջ 9):

<sup>7</sup> Տե՛ս Ծ Прижиленский В.И., Философия юридической науки, М., 2016, էջ 17; Шкляр М.Ф., Основы научных исследований. М., 2014, էջեր 23-24:



ՀՀ բարեփոխված Սահմանադրությունը գիտության հետ կապված հիմնահարցերի իրավական կարգավորումն իրականացրել է մի քանի առումներով, ինչը կարելի է համարել գովելի:

### **Պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք**

Այս կարևոր դրույթն ամրագրված է Սահմանադրության 15-րդ հոդվածում և համարվում է սահմանադրական կարգի հիմունք: Հաշվի առնելով գիտության և կրթության դերը՝ Սահմանադրությունը ճանաչում է ՀՀ սահմանադրական պարտավորությունը՝ խթանել գիտության զարգացումը: Եթե փորձենք լեզվաբանական մեկնաբանության ենթարկել «գիտություն» եզրույթն այս իրավադրույթում, ապա կարող ենք փաստել, որ այստեղ խոսքը վերաբերում է գիտության հասկացության բոլոր առումներին և, ամենից առաջ՝ գիտությունը որպես գիտելիք, որպես գործունեություն, աշխատանք, սոցիալական ինստիտուտ, մշակույթի հատուկ ոլորտ, գիտակցություն:

Խթանել՝ նշանակում է ստեղծել բարենպաստ սոցիալական միջավայր և պայմաններ սոցիալական կապերի համար: Իրավական խթաններ են համարվում իրավունքի (օրենքի) միջոցով հնարավորություններ ստեղծող, կատարելագործման և առաջադիմության համար բարենպաստ պայմաններ ու կառուցակարգեր ապահովող ամեն ինչ՝ լիազորում, արտոնություն, խրախուսում և այլն: Սահմանելով խթանման համակարգ՝ իրավունքը կոչված է ազդելու, օրինակ, գիտական գործունեության բոլոր սուբյեկտների վրա, դրդել նրանց հասարակության համար օգտակար ուղղությամբ գործունեության: Այս համատեքստում Սահմանադրության 15-րդ հոդվածի քննարկվող դրույթը պետք է հասկանալ հետևյալ իմաստով՝ պետությունը խթանում է գիտության՝ որպես գիտելիքի, որպես սոցիալական ինստիտուտի, որպես մշակույթի հատուկ ոլորտի զարգացումը, ինչպես նաև գիտականության՝ որպես աշխարհայացքի զարգացումը:

Սահմանադրության 15-րդ հոդվածի քննարկվող դրույթը կրթության վերաբերմամբ նշանակում է, որ պետությունը խթանում է կրթության զարգացումը, կրթությունը՝ օբյեկտիվ իմաստով, այսինքն՝ կրթական համակարգի, և կրթությունը սուբյեկտիվ իմաստով՝ որպես հիմնական իրավունք: Այդ երկուսի խթանման արդյունքը, ի վերջո, կրթվածության զարգացումն է:

Կարծում ենք, որ գիտության և կրթության դեպքում «խթանում» եզրույթի օգտագործումը ճիշտ չէ: Օրինակ՝ եթե պետության գործառույթ է համարվում գիտատեխնիկական առաջադիմությունը՝ որպես խնդիր, ապա Սահմանադրության մեջ տեղին կլինե՞ր օգտագործել ապահովել (կամ իրականացնել) եզրույթը, որը ենթադրում է գործառույթի կենսագործման բոլոր հնարավոր ձևերը (կազմակերպական և իրավական), ինչպես նաև մեթոդները (օրինականություն, տեղեկութավորում, համոզում, խրախուսում, խթանում, անմիջական կառավարում, հարկադրում և այլն)<sup>8</sup>:

Չօգուտ այս փաստարկի են խոսում ոչ միայն պետության և իրավունքի տեսության մաս համարվող պետության գործառույթների տեսության մեթոդաբանական դրույթները, այլ հենց Սահմանադրության 86-րդ հոդվածի 14-րդ կետը, որը հիմնարար և կիրառական գիտության զարգացումը ճանաչում է պետության քաղաքականության

<sup>8</sup> Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ, Եր., 2010, էջ 109:

հիմնական նպատակ: Հիմնական նպատակի իրագործման մեթոդը չի կարող լինել միայն զարգացման իրավական խթանումը: Նույն տրամաբանությունը վերաբերում է նաև կրթության հարցին:

### **Գիտության և կրթության ոլորտում պետության քաղաքականության հիմնական սահմանադրական նպատակները. միջոցների և նպատակների հարաբերակցությունը**

Գիտությունների դասակարգման տարբերակներից մեկն էլ դրանց բաժանումն է հիմնարարի (ֆունդամենտալ) և կիրառականի: Դասակարգման չափանիշ է համարվում գիտական իմացության արդյունքների պրակտիկայում կիրառելիության աստիճանը<sup>9</sup>: Կիրառական գիտությունների միջոցով ձեռք բերած իմացությունը հնարավոր է անմիջականորեն օգտագործել պրակտիկայում: Դրանք ուղղված են տեխնիկական-արտադրական, սոցիալ-տեխնիկական հիմնախնդիրների լուծմանը<sup>10</sup>: Մինչդեռ հիմնարար գիտությունների մշակած գիտելիքն ուղղակիորեն և անմիջականորեն չի կողմնորոշված դեպի պրակտիկա (կամ էլ առայժմ հնարավոր չէ դա կիրառել):

Ըստ էության սահմանադրական կարգավորման մակարդակում գիտությունների նման տարանջատումը, երևի թե, անտեղի է, հատկապես որ արդի դարաշրջանում այդ բաժանումն արդեն հարաբերական է և գիտաբանների մի մասի կողմից համարվում է հնացած մոտեցում: Մյուս կողմից՝ Սահմանադրության 86-րդ հոդվածի 14-րդ կետը սահմանադրական կրկնաբանություն է, որովհետև իմաստային առումով ոչինչ չի ավելացնում Սահմանադրության 15-րդ հոդվածի բովանդակությանը:

**Գիտության զարգացումն ինքնանպատակ չէ: Հետևաբար՝ այն չի կարող լինել պետության նպատակ:** Պետության նպատակն է գիտությունը դարձնել հասարակական զարգացումը և առաջադիմությունն ապահովող գործիք, հզոր ուժ՝ արտադրական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Հասարակական կյանքի խնդիրների լուծման համար պետությունը պետք է դրանք լուծի որոշակի գործունեություն իրականացնելու միջոցով: Այդ գործունեության բովանդակությունը կազմում է հենց պետության կողմից իրականացվող գործառույթը: Օրինակ՝ բնակարանային շինարարության խթանումը նպատակ չէ, այլ միջոց՝ նպատակին հասնելու համար (Սահմանադրություն, հոդված 86, կետ 3): Նույն կերպ նաև գիտության զարգացմանն ուղղված գործունեությունը միջոց է նպատակին հասնելու համար:

Պետության գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնցով իրագործվում են հասարակության պետական կառավարման նպատակներն ու խնդիրները: Նպատակն այն արդյունքն է, որին հասնելուն ուղղված են գործողությունները: Նպատակն ուղղորդում և կարգավորում է գործողությունները<sup>11</sup>: Որևէ ոլորտում պետության խնդիրները բխում են նպատակից և պահանջում են լուծում, իսկ պետության գործառույթն այդպիսի լուծմանն ուղղված գործունեությունն է:

<sup>9</sup> Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ, Եր., 2010, էջ 8:

<sup>10</sup> Տե՛ս Սկլյար Մ.Փ., Основы научных исследований. М., 2014, էջ 65:

<sup>11</sup> Նպատակը կարող է դառնալ իրականությունը վերափոխող ուժ միայն դրա պրակտիկ իրագործման համար անհրաժեշտ որոշակի միջոցների փոխգործողության պայմաններում (տե՛ս Философский словарь. Под ред. И.Т. Фролова, М., 1987, էջ 534):

Այսպիսով, Սահմանադրության 86-րդ հոդվածի վերտառության և հոդվածում թվարկված դրույթների միջև գոյություն ունի որոշակի տրամաբանական անհամապատասխանություն, ինչը շտկման կարիք ունի:

Նույն տրամաբանությամբ անհասկանալի է մնում 86-րդ հոդվածի 13-րդ կետը: Սահմանադրության 15-րդ հոդվածի 1-ին մասը իբրև սահմանադրական կարգի հիմունք ճանաչում է ընդհանրապես մշակույթի, կրթության և գիտության զարգացման խթանումը՝ որպես պետության պարտավորություն: Ինչպես վերը նշեցինք, կրթությունը հասկացվում է երկու իմաստով՝ որպես համակարգ և սուբյեկտիվ իրավունք: Ինչպես գիտության հարցում, ենթադրվում է, որ հոդվածը կրթության հարցում պետք է դրսևորեր լայն մոտեցում և տար այնպիսի ձևակերպում, որը կներառեր կրթական համակարգն իր բաղադրամասերով: Այնինչ 13-րդ կետը պետության քաղաքականության հիմնական նպատակ է ճանաչում անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը:

Նախ ձևակերպումն ինքնին անհասկանալի է: Անվճարը վերաբերում է միայն բարձրագույնին, թե՛ նաև մասնագիտական այլ կրթության: Եթե այստեղ հեղինակները ենթադրում են մասնագիտական կրթության անվճար համակարգի ստեղծում ապագայում, ապա անտեղի է «զարգացում» եզրույթի օգտագործումը: Իսկ եթե խոսքը վերաբերում է կրթության համակարգում մասնագիտական կրթության զարգացմանը, ապա առաջ է գալիս հարց՝ իսկ ինչ ու միայն այդ բաղադրատարրը:

### **Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործման հարցում կառավարության պատասխանատվությունը**

Սահմանադրության 86-րդ հոդվածի և դրա 14-րդ կետի հիմնական իրավական հասկացություններից են նաև «պետության քաղաքականությունը», «գիտության զարգացումը»: Հիմնարար և կիրառական գիտության զարգացման հարցում պետության պարտավորության կատարման ընդհանուր երաշխիք է Սահմանադրության 87-րդ հոդվածը: Այդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները, այդ թվում՝ հիմնարար և կիրառական գիտության զարգացումը:

Այս ընդհանուր պարտավորությունն իր հերթին ունի մեկ այլ կարևոր երաշխիք՝ ի դեմս Սահմանադրության 87-րդ հոդվածի 2-րդ մասի, համաձայն որի՝ կառավարությունն Ազգային ժողով ներկայացվող «իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույցի շրջանակներում պարտավոր է տեղեկատվություն ներկայացնել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործման վերաբերյալ: Այսպիսով, ամենամյա զեկույցի պարտադիր բովանդակային մաս պետք է հանդիսանա նաև հիմնարար և կիրառական գիտության զարգացումը, մասնավորապես՝ այդ ոլորտում տարվող քաղաքականության կատարման ընթացքը, արդյունքները:

## **Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունը որպես սահմանադրական իրավունք**

Գիտության հիմնահարցերի սահմանադրական կարգավորման կարևոր առումներից է Սահմանադրության 43-րդ հոդվածը՝ ստեղծագործության ազատությունը: Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների շարքում ամրագրում է այնպիսի իրավունք, ինչպիսին է ստեղծագործական ազատությունը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն»: Ստեղծագործության ազատությունը սահմանադրական իրավունքի նորագույն շրջանի ինստիտուտներից է և համարվում է մարդու հիմնական մշակութային իրավունքներից մեկը: Այն ինքնաարտահայտման ազատության տարատեսակ է:

ՀՀ Սահմանադրության դրույթները տառացի իմաստով ընդգրկում են գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործությունների ոլորտները: Մինչդեռ ՌԴ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է այդ ազատությունը նաև «ստեղծագործության այլ տեսակների համար», ինչպես նաև դասավանդման ազատությունը:

Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունը ներառում է գիտական հետազոտության, ինչպես նաև տեսությունների ազատություն, ազատությունը՝ ընդունել այլոց գիտելիքները (սովորելու ազատություն): Որպես մարդու հիմնական իրավունք Սահմանադրության 43-րդ հոդվածը երաշխավորում է գիտական հետազոտության առարկայի և մեթոդի ազատ ընտրություն, ինչպես նաև ստացված գիտատեխնիկական արդյունքների ազատ տարածում:

**Գիտական ստեղծագործությունը**, որ բնորոշվում է որպես ստեղծագործական գործունեություն, որն ուղղված է բնության, հասարակության և մտածողության նոր օրենքների և օրինաչափությունների բացահայտմանը, հիմնարար (կամ կիրառական) տեսությունների, հայեցակարգերի, հայեցակետերի, մաթեմատիկական կամ հետազոտության այլ մեթոդների, այլ գիտական արդյունքների մշակմանը, իրեն յուրահատուկ մեթոդներով իրականացվող հետազոտությունների արդյունքում ստեղծում է գիտելիքների համակարգ, որի խնդիրն է աշխարհի երևույթների ու գործընթացների բացատրումը, դրանց ընթացքի կանխատեսումը գիտական օրենքների ու սկզբունքների միջոցով: Այն, ներթափանցելով հասարակության ինչպես արտադրական, այնպես էլ քաղաքական, վարչական, ռազմական ոլորտները, դառնում է հասարակական-տնտեսական ներուժի կարևորագույն գործոն, որոշիչ դեր է կատարում հասարակության նյութատեխնիկական բազայի ստեղծման, արտադրության զարգացման համար<sup>12</sup>:

**Տեխնիկական ստեղծագործությունը** ներառում է նոր կառուցվածքների, կիրառական բնույթի տեխնիկական լուծումների, սարքերի, նյութերի և այլնի ստեղծումը, որոնք կարող են օգտագործվել արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ, տնտեսության մյուս ճյուղերում կամ հասարակական ոլորտում: Տեխնիկական գործունեությունը, թեև ընթանում է բնական օրենքների համաձայն, բայց դրա գոյության իմաստը և զարգացման օրինաչափությունները հասկանալի են դառնում միայն մարդու գործունեության համակարգում, այն հասարակական նպատակներով բնական նյութի վերափոխումն է, գիտությունն անմիջական արտադրողական ուժի վերաճելու գործընթացը: Կոչված է թեթևացնելու մարդու գործունեությունը, այն

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի. - Եր., 2010, էջ 477:

դարձնելու ավելի արդյունավետ և ստեղծագործական՝ տնտեսական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում<sup>13</sup>:

### **Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության սահմանադրական երաշխավորման անհրաժեշտությունը**

Ընդհանրապես ստեղծագործության ազատությունը՝ ներառյալ գիտական և տեխնիկական ստեղծագործության ոլորտում կարիք ունի պաշտպանության: Առաջին հայացքից թվում է, թե նոր և նորագույն դարաշրջանի ռացիոնալիստական հասարակության մեջ ստեղծագործության ազատությունը երաշխավորված է ինքնաբերաբար: Մակայն իրականում այդպես չէ՝ պայմանավորված գիտության (նաև արվեստի) հասարակական-պատմական առանձնահատկություններով:

Գիտությունը հասարակության հոգևոր լուսավորման, տեխնիկական զարգացման և հասարակական նորացման կարևոր միջոց է: Գիտական հետազոտությունների արդյունքները շատ հաճախ բախվում են ավանդական համոզմունքների, իսկ ավելի հաճախ նաև պետական ու հասարակական կառույցների հետ: Գիտությունը պետք է լինի բաց նոր գիտելիքի համար, տեղ թողնի նորարարությանը և հայտնագործությանը: Դրան հակառակ՝ պետական կառույցները գրեթե միշտ ձգտում են «կայունության»: Այս պարագայում ևս առաջանում է բախում գիտության և պաշտոնական քաղաքականության միջև: Այսպիսով, գիտական հետազոտությունների արդյունքների, մի կողմից, և արդեն իսկ հանրաճանաչ համարվող պատկերացումների, հայացքների, տեսությունների կամ գաղափարախոսության՝ մյուս կողմից, հակասությունների հնարավորությունը հրամայաբար պահանջում է գիտական նորարարության պաշտպանություն, իսկ դրա իրավական ձևը ստեղծագործության ազատությունը հիմնական իրավունքների ու ազատությունների շարքում դասելն է:

Ցանկացած մարդկային գործունեություն, ներառյալ՝ ստեղծագործությունը, ընթանում է որոշակի հասարակական ու մշակութային տիրույթում: Գիտության և տեխնիկական ստեղծագործության վրա իրենց ազդեցությունն են թողնում կոնկրետ հասարակության մշակութային, տարածքային, դարաշրջանային, տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ գործոնները: Այդ գործոններն էականորեն ներգործում են հետազոտողների և ստեղծագործողների վրա: Հետևաբար՝ ստեղծագործող սուբյեկտը ոչ միշտ է, որ ազատ է: Նա կապված և կաղապարված է քաղաքական, գաղափարական դիրքորոշումներով, որոնք ոչ միայն կարող են ազդել հետազոտողի վրա, այլև խոչընդոտել նրան, արգելքներ ստեղծել ստեղծագործական աշխատանքի համար: Մա ևս կարևոր հանգամանք է գիտական և այլ ոլորտներում ստեղծագործության ազատությունը սահմանադրական մակարդակով երաշխավորելու համար:

Գտությունը և գիտական հանրությունը անհատական ու կոլեկտիվ բարդ հարաբերությունների բնույթ ունեն, ինչը երբեմն կարող է անցնել հանդուրժողականության սահմանները: Գիտական հանրությունը տարբեր դրդապատճառներով երբեմն նաև դիմադրում է նորարարությանը, կորցնում է գիտական դեմքը: Նոր գիտելիքի առաջխաղացման կարևոր երաշխիքն այս պարագայում գիտական ստեղծագործության ազատության սահմանադրական երաշխավորումն է:

<sup>13</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի. - Եր., 2010, էջ 477:

## **Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունքի միջազգային իրավական հիմքերը**

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.) առաջիններից էր, որ ամրագրեց գիտական գործունեությանն առնչվող իրավակարգավորում: Հռչակագրի 27-րդ հոդվածը սահմանեց, որ «Ամեն մարդ իրավունք ունի ազատորեն մասնակցելու հասարակության մշակութային կյանքին, վայելելու արվեստները, մասնակցելու գիտական առաջընթացին և օգտվելու դրա բարիքներից»: Այսպիսով, Հռչակագիրն ընդամենը արձանագրում էր «գիտական գործունեության մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունքը» կամ, որ նույնն է՝ գիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

20-րդ դարի ինդուստրիալ և հետինդուստրիալ հասարակությունների համար այդ իրավունքն արտառոց չէր, քանի որ գիտական գործունեությունն այդ պահին արտադրական աշխատանքի տեսակներից մեկն էր և ըստ էության աշխատանքի իրավունքն արդեն երաշխավորում էր հնարավորությունը մասնակցելու գիտական առաջընթացին:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.) ընդլայնեց գիտական գործունեության միջազգային իրավական կարգավորման շրջանակները՝ մի քանի ուղղությամբ:

Առաջին, դաշնագիրը պարտավորեցնում էր մասնակից պետություններին ճանաչել յուրաքանչյուր մարդու իրավունքն օգտվելու գիտական առաջընթացի արդյունքներից և գործնականում կիրառելու դրանք (հոդված 15, մաս 1, կետ 2):

Երկրորդ, դաշնագրով մասնակից պետությունը պարտավորվում էր ձեռնարկել միջոցառումներ այդ իրավունքի լրիվ իրականացման համար, ներառյալ նաև այնպիսիք, որոնք անհրաժեշտ են գիտության նվաճումների պահպանության, զարգացման և տարածման համար:

Երրորդ, դաշնագրով մասնակից պետությունները պարտավորվում էին հարգել գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության համար անպայմանորեն անհրաժեշտ ազատությունը (հոդված 15, մաս 3):

Չորրորդ, դաշնագրով մասնակից պետությունները պարտավորվում էին խթանել և զարգացնել գիտության ոլորտում միջազգային շփումները և համագործակցությունը:

Այսպիսով, դաշնագրի 15-րդ հոդվածի իմաստով ստեղծագործական ազատության՝ որպես սուբյեկտիվ իրավունքի երաշխիքն այդ ազատությունը հարգելու պետության պարտականությունն է:

## **Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունքի սուբյեկտները և երաշխիքները**

Քննարկվող ազատության կրողին նշելու համար Սահմանադրության 43-րդ հոդվածն օգտագործում է «յուրաքանչյուր ոք» հասկացությունը: Որպես կանոն, «յուրաքանչյուր ոք» իրավական ձևակերպումը ենթադրում է ֆիզիկական անձին՝ անկախ նրա կացության կարգավիճակից: Մակայն ստեղծագործական ազատության իրավունքի կրող են նաև իրավաբանական անձինք, քանզի ստեղծագործության ազատությունը, որպես հիմնական իրավունք, իր էությամբ կիրառելի է նաև իրավաբանական անձանց նկատմամբ (Սահմանադրության հոդված 74):

Գիտական (գիտահետազոտական) գործունեությունն ուղղված է նոր գիտելիքների ստացմանը և կիրառմանը (ներառյալ հիմնարար և կիրառական): Գիտատեխնիկական գործունեությունն ուղղված է նոր գիտելիքներ ստանալուն և դրանց կիրառմանը, տեխնոլոգիական, ինժեներական, տնտեսական, սոցիալական, հումանիտար և այլ խնդիրների լուծմանը, գիտության, տեխնիկայի ու արտադրության՝ որպես միասնական համակարգի գործառութավորման ապահովմանը:

Գիտական և տեխնիկական ստեղծագործությունը կարող է իրականացվել անհատական և կոլեկտիվ կերպով: Գիտական և տեխնիկական գործունեության իրականացման կոլեկտիվ ձևը գիտական կազմակերպությունն է, որը՝ որպես իրավաբանական անձ, կարող է ունենալ կազմակերպական-իրավական և սեփականության զանազան ձևեր:

Համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 05.02.2000) 4-րդ հոդվածի՝ գիտական և գիտատեխնիկական գործունեությունն իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են գիտնականները, գիտական աշխատողները, գիտամանկավարժական բնագավառի աշխատողները, գիտական (ներառյալ՝ հասարակական) կազմակերպությունները, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները: Գիտական կազմակերպությունը կարող է ունենալ առևտրային և ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձև կամ լինել հիմնարկ (հոդված 6):

Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունքի երաշխիքները պայմանավորված են այդ իրավունքը կրող սուբյեկտի կարգավիճակով, այն է՝ ֆիզիկական անձ, որն անհատապես զբաղվում է գիտական կամ տեխնիկական գործունեությամբ, և թե անձ, որը հանդես է գալիս որևէ կազմակերպությունում որպես գիտաշխատող: Բառի բուն իմաստով՝ գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունքի բացարձակ կրողը կարող է հանդիսանալ միայն անհատ հետազոտողը կամ ինքնավար իրավաբանական անձը:

Գիտական գործունեության մյուս սուբյեկտների գիտական կամ տեխնիկական գործունեության ազատությունը հարաբերական է՝ սահմանափակված աշխատանքային և այլ պայմանագրային պարտավորություններով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ազատության իրավունքի երաշխիքներ են համարվում սահմանադրական այլ իրավունքները, որոնք առնչվում են այս իրավունքին: «Քանի որ ստեղծագործությունը մարդու ինքնադրսևորման եղանակներից մեկն է, և այն անխզելիորեն կապված է մտքի, կարծիքների և համոզմունքների, խոսքի և տեղեկատվության ազատության հետ, ուստի ստեղծագործության ազատությունը ենթադրում է, որ պետական մարմինները, նրանց պաշտոնատար անձինք, տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող միջամտել մարդկանց կամ նրանց միավորումների ստեղծագործական գործունեությանը, չեն կարող նրանց ստիպել ընտրելու ստեղծագործության ուղղությունը, թեման, նկարագրման ենթակա առարկաները, արտահայտչական պատկերավորման միջոցները և գեղարվեստական եղանակները, չեն կարող տալ ստեղծագործության արդյունքների գեղարվեստական, գիտական և այլ գնահատականներ, չեն կարող թելադրել, թե մարդիկ ինչի մասին և ինչպես գրեն, ինչը նկարեն, ինչը՝ ոչ, և այլն»<sup>14</sup>:

<sup>14</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի. - Եր., 2010, էջ 477:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը (գիտնականի և գիտական աշխատողի իրավունքները և պարտականությունները) սահմանում է մի շարք կարևոր երաշխիքներ գիտնականների և գիտական աշխատողների համար<sup>15</sup>: Նրանք իրավունք ունեն

- 1) իրենց հետաքրքրություններին, ստեղծագործական ունակություններին, ինչպես նաև համամարդկային ու ազգային արժեքներին համապատասխան ընտրել գիտական և գիտատեխնիկական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ.
- 2) գիտական և գիտատեխնիկական համատեղ գործունեություն ծավալելու նպատակով միավորվել այլ գիտնականների, գիտական աշխատողների հետ և կազմակերպել մշտական կամ ժամանակավոր գիտական կոլեկտիվներ.
- 3) պատճառաբանված կերպով հրաժարվել այն գիտական կամ գիտատեխնիկական հետազոտություններին մասնակցելուց, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել մարդու, հասարակության կամ շրջակա միջավայրի վրա.
- 4) իրենց որակավորմանը, ստացված գիտական արդյունքների, կատարվող աշխատանքի որակի և բարդության աստիճանին համապատասխան ակնկալել իրենց գործունեության անաչառ գնահատական և նյութական խրախուսում, ինչպես նաև վարձատրվել կամ եկամուտ ստանալ իրենց գիտական կամ գիտատեխնիկական գործունեության արդյունքի իրացումից.
- 5) մասնակցել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող գիտական հետազոտությունների համար հայտարարված մրցույթներին.
- 6) տպագրել և հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.
- 7) մասնակցել գիտական և գիտատեխնիկական աշխատողների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներին.
- 8) գիտության զարգացման, տեխնոլոգիաների, գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, արտադրության մեջ դրանց ներդրման ու գիտական կադրերի պատրաստման համար արժանանալ գիտական աստիճանների, գիտական կոչումների, մրցանակների, տիտղոսների, պատվավոր կոչումների.
- 9) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվության.
- 10) զբաղվել մանկավարժական գործունեությամբ, իրականացնել խորհրդատվություն, լինել փորձագետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.
- 11) գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի վերլուծությունը ևս հաստատում է, որ որոշակի կազմակերպությունների

<sup>15</sup> Այդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում ամրագրված են նաև գիտնականի և գիտական աշխատողի պարտականությունները՝ ա) գիտական կամ գիտատեխնիկական գործունեությամբ վնաս չհասցնել մարդու կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին. բ) պահպանել էթիկայի չափանիշները և մտավոր սեփականության իրավունքը:



գիտական աշխատողը չունի ստեղծագործության և դրա արդյունքների նկատմամբ լրիվ ազատություն: Մասնավորապես նա չի կարող՝

- 1) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել կազմակերպությունում ստացված գիտական տեղեկատվությունը.
- 2) գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, *եթե դա նախատեսված չէ պայմանագրով:*

Գիտական աշխատողը նաև պարտավոր է՝ ա) գիտական հետազոտությունները կատարել կնքված պայմանագրերին համապատասխան. բ) մշտապես բարձրացնել իր որակավորումը:

### **Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական սահմանները և սահմանափակումը**

Ընդհանրապես ստեղծագործության ազատությունը չի նշանակում, որ այդ իրավունքը բացարձակ է և անսահման: Որպես մարդու իրավունք՝ այն ունի իրականացման սահմաններ, որից այն կողմ չի կարող պաշտպանվել կամ երաշխավորվել ցանկացած ազատություն, ներառյալ գիտական և տեխնիկական ստեղծագործության: Մարդու հիմնական իրավունքների, ներառյալ ստեղծագործության ազատության իրականացման առաջին և ընդհանուր կանոնն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածում (ազատ գործելու իրավունքը): «Մարդն ազատ է անելու այն ամենն, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին»:

Սահմանադրության այս հոդվածը պարունակում է երկու կարևոր դրույթներ, որոնք ստեղծագործության ազատության վերաբերյալ կարող են մեկնաբանվել հետևյալ իմաստներով՝

- ա) մարդը ստեղծագործելիս ազատ է անելու այն ամենն, ինչը չի խախտում այլոց իրավունքները,
- բ) մարդը ստեղծագործելիս ազատ է անելու այն ամենն, ինչը չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին:

Գիտական և տեխնիկական գործունեության ազատությանն առնչվում են սահմանադրական որոշակի, կոնկրետ արգելքներ՝ ամրագրված Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում: Համաձայն 25-րդ հոդվածի 3-րդ մասի՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը: Սահմանադրության 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտված համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի»: Մարդը նախապես պետք է տեղեկացվի նման փորձերի հնարավոր հետևանքների մասին:

Այս երկու արգելքներն ունեն միջազգային իրավական հիմքեր: Այսպես՝ Եվրոպայի խորհրդի «Կենսաբանության և բժշկության նվաճումների կապակցությամբ մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության պաշտպանության մասին համաձայնագիրը» (1997թ.) հայտարարում է, որ կենսաբանության և բժշկության դատապար-

տելի օգտագործումը կարող է հանգեցնել այնպիսի գործողությունների, որոնք կարող են սպառնալիքի տակ դնել մարդկային արժանապատվությունը, որ կենսաբանության և բժշկության ոլորտի հաջողությունները պետք է օգտագործվեն հանուն ներկա և ապագա սերունդների բարիքի: Այդ կոնվենցիայի 2-րդ հոդվածը հռչակում է, որ առանց մարդու անձնական համաձայնության արգելվում է ցանկացած կենսաբժշկական փորձերի և հետազոտությունների անցկացումը: Ապրող մարդու մարմինների և հյուսվածքների հեռացում փոխապատվաստման նպատակով, կարող է կատարվել միայն այդ մարդու գրավոր համաձայնությամբ: Մարդու մարմինները և դրա մասերը չպետք է դառնան ֆինանսական օգուտի ստացման աղբյուր:

«Մարդկանց կլոնավորման արգելման մասին կոնվենցիան» (1998թ., Փարիզ) և դրա լրացուցիչ արձանագրությունը մանրամասն ամրագրում են մարդու կլոնավորման արգելքի հիմնավորումները: «Մարդու գործիքայնացումը՝ գենետիկորեն նույնատիպ մարդկանց կանխատեսված ստեղծման միջոցով, հակասում է մարդկային արժանապատվությանը և դրա ուժով իրենից ներկայացնում է կենսաբանության ու բժշկության նվաճումների դատապարտելի օգտագործում...»<sup>16</sup>: Կոնվենցիան արգելում է ցանկացած միջամտություն մարդուն գենետիկորեն նման այլ մարդ ստեղծելու նպատակով, լինի նա ապրող, թե՛ մահացած մարդ: Բացառություններն այս կանոնից արգելված են:

Սահմանադրության 77-րդ հոդվածով սահմանված հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքն իր հերթին գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության ընդհանուր սահմաններից մեկն է: Դրա ուժով արգելվում է գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատլություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Բացի սահմաններից, ստեղծագործության ազատության իրավունքը Սահմանադրության 76-րդ հոդվածի ուժով ճանաչվում է արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ սահմանափակվող իրավունք: Դրանից հետևում է, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ Սահմանադրության 43-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կարող է օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում: Այդ սահմանափակումները պետք է համապատասխանեն հիմնական իրավունքների սահմանափակման ընդհանուր սահմանադրական սկզբունքներին՝ համաչափություն, որոշակիություն, միջազգային իրավական սահմանափակումներին չզերազանցություն:

### **Գիտության և գիտական ու տեխնիկական գործունեության ազատության իրավական կարգավորման բնութագիրը և դրա վերաբերյալ հայեցակարգային առաջարկություններ**

2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում պետության քաղաքականության հիմնական նպատակներից մեկը ճանաչվեց հիմնարար և կիրառական գիտության զարգացումը: Իսկ 43-րդ հոդվածն ամրագրեց գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատությունը:

<sup>16</sup> Տե՛ս Փարիզի 1998թ. հունվարի 12-ի՝ «Մարդկանց կլոնավորման արգելման մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը»:

Բարեփոխված Սահմանադրությունը, ի տարբերություն նախորդ երկու խմբագրությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պարտավորեցնում է իրենց իրավահավասարությունների և հնարավորությունների շրջանակում իրագործել պետական քաղաքականության հիմնական նպատակները, ներառյալ գիտության զարգացումը (87-րդ հոդվածի 1-ին մաս):

Անցած տարիների ընթացքում, հատկապես վերջին տասնամյակում ՀՀ-ն ձեռնարկել է իրավաստեղծագործական և կազմակերպական բավականին մեծաթիվ քայլեր գիտության ոլորտի զարգացումն ապահովելու և այն արտադրական ներուժի վերածելու ուղղությամբ: Ներկայումս ոլորտում օրենսդրական կարգավորումն իրականացվում է մի շարք օրենքների հիման վրա, մասնավորապես՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, «Բնովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ոլորտին առնչվող մի շարք այլ օրենքներ:

Գիտության ոլորտի իրավական կարգավորման կառուցակարգի նորմատիվային բաղադրատարրի վերլուծությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, կարգավորման գործում գերակշռող դերակատարություն ունեն կառավարական որոշումները<sup>17</sup>: Ոլոր-

<sup>17</sup> Տե՛ս, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայություններին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում (2014թ. դեկտեմբերի 25-ի N 54), «Հայաստանի Հանրապետության գիտական օբյեկտների հիմնանորոգման, կառուցման և արդիականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում (2014թ. ապրիլի 30-ի N 17), «Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամ հիմնադրելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2012թ. դեկտեմբերի 6-ի N 1638-Ն), «Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման 2012-2013 թվականների միջոցառումների ծրագրին և դրա իրականացման ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 24-ի նիստի N 20 արձանագրային որոշում, «Հայագիտության զարգացման հայեցակարգին, հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թվականների ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշում, «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրին և միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշում, «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2011թ. մարտի 18-ի նիստի N 10 արձանագրային որոշում, «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 20 արձանագրային որոշում: «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2010-2014 թվականների գերակայությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1302-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2010թ. մայիսի 27-ի N 640-Ն), «Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակ հայցողների ներկայացրած աշխատանքների փորձաքննության անցկացման և մրցանակի թեկնածուի ընտրության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու և գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2009 թ. հուլիսի 23-ի N 861-Ն), «Հայ գիտնականների ներուժի համախմբման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում (2009թ. ապրիլի 30-ի N 459-Ն) և այլն:

տի զարգացումն ապահովելու նպատակով վերջին տարիներին կառավարությունը ձեռնարկել է գործուն քայլեր, որոնցից հատկապես կարելի նշել գիտության կոմիտեի հիմնադրումը<sup>18</sup>, «ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը», «ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը» և այլն:

**«ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը»** ամրագրում է 2011-2020 թվականներին գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը<sup>19</sup>: Այդ Ռազմավարությունը Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջություն է: Ռազմավարությունը հիմք էր Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 և 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրերի մշակման համար: Այդ ծրագրերը ապահովելու էին Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի դինամիկ և նպատակաուղղված զարգացումը:

ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարության հիման վրա ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հաստատվել է **«ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը»**: Այս ծրագիրը ոլորտի զարգացման թիրախային նպատակակետերի, դրանց ձեռքբերմանն ուղղված միջոցառումների (ներկա վիճակը, առկա հիմնական խնդիրները, առկա խնդիրների հիմնական լուծումները) և այդ միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման չափորոշիչների վերաբերյալ դրույթների ամբողջություն է:

ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի որոշման հավելվածով հաստատվել է **«ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»**: Այն փոխարինեց 2008 թ. ընդունված **«Կայուն զարգացման ծրագրին»**՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները: Այդ փաստաթղթում նախանշված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների ընդհանրական համախումբը, նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանփակումները, գերակա նպատակին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքական գործիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը: Ծրագրի գերակայություններից է համարվում մարդկային կապիտալի զարգացումը՝ ներառյալ գիտության:

<sup>18</sup> Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն ստեղծվել է ՀՀ Նախագահի 2007թ. հոկտեմբերի 1-ի թիվ ՆՀ 174-Ն հրամանագրով՝ որպես նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին: Գիտության պետական կոմիտեն մշակում և իրականացնում է գիտության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Կոմիտեի նպատակներն ու խնդիրներն են՝ հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրմանը նպաստելը: Գիտության ոլորտի զարգացման ու բնականոն գործունեության ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն: Գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումն ու իրականացումը: Նորամուծական (ինովացիոն) քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակցելը: Հայաստանի Հանրապետությունում հիմնարար ու կիրառական գիտության և գիտատեխնիկական արդյունքի ու բարձր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելը:

<sup>19</sup> Ընդունվել է կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ՝ որպես հավելված:

Վերը նշված ծրագրային փաստաթղթերի բովանդակային վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ դրանք բավականին հազեցած են նորարարական ու հայեցակարգային դրույթներով: Մակայն, ըստ էության, բացի գիտության կոմիտեի ստեղծումից, ոլորտում ակնհայտ նվաճումներ դեռևս չեն նկատվում: Պատճառն այն է, որ երբեմն մշակելով բավականին լավ ծրագրեր, մենք չենք կարողանում ապահովել դրանց կատարումը: Դա մասամբ պայմանավորված է ծրագրերի ֆինանսական կողմի թերացումներով, երբեմն՝ ծրագրային դրույթների ձևական բովանդակությամբ: Մակայն անհաջողության հիմնական պատճառներից է պետական ապարատի դանդաղաշարժությունը, կարևոր գործընթացները ձևական ծրագրային մոտեցումներով փոխարինելը, պրոֆեսիոնալիզմի պակասը և այլն: Այս ամենը նշանակում է, որ **Հայաստանում կա պետության հաշվետուության ու պատասխանատվության հիմնախնդիր:**

Որպես օրինակ դիտարկենք «ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը»: Այն, ելնելով գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կառավարման ու աշխատանքների կազմակերպման համակարգի կատարելագործման, ոլորտի կայուն զարգացման պայմանների ստեղծման նպատակից՝ նախատեսում էր գիտության ոլորտում ՀՀ օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նոր կարգերի սահմանում: Որպես դրա իրականացման ձև նախատեսված էր «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» նոր օրենքի և «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքի ընդունում: Առաջինով պետք է կատարվեր գիտության գործառույթների ճշգրտում և հստակեցում, ոլորտը կանոնակարգող օրենսդրական դրույթների համապատասխանեցում ներկա իրավիճակին, իսկ երկրորդով ներդրվելու էր անկախ գիտական փորձագիտական համակարգ: Որպես այդ միջոցառման կատարման ժամկետ նշված է 2011-2012 թթ.: Երկրորդ օրենքն ընդունվել է 2015թ., իսկ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» նոր օրենքը չի ընդունվել մինչև հիմա:

*Այսպիսով, գիտության ոլորտի զարգացման, ինչպես նաև գիտական ու տեխնիկական ստեղծագործության ազատության երաշխավորման համար իրավական անհրաժեշտ քայլը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» նոր օրենքի ընդունումն է: Բացի դրանից, առաջարկում ենք Գերմանիայի օրինակով «Գիտության ազատության մասին» օրենքի ընդունումը, որը կստեղծի նոր հնարավորություններ գիտահետազոտական կազմակերպությունների համար, նրանց ինքնավարության, ազատության, ինչպես նաև սեփական պատասխանատվության հարցերում:*